

**ԽՐԱՏ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ
ՄԱՍԻՆ**

Միրելիներ ձեր զաւակները Աստուծոյ երկիւղով կրթեցէք, որպէսզի Աստուծմէ վարձատրուիք, ինչպէս կը գրէ Պօղոս, թէ «Կինը պիտի ապրի որդեսնութեամբ» (Ա. Կրթ. 2.15), այսինքն երբ իրենց զաւակները Աստուծոյ երկիւղով եւ հաւատքով մեծցնեն, Աստուծմէ կը վարձատրուին:

Հայրեր, դուք եւս լսելով ասիկա, ձեր զաւակները Աստուծոյ համաձայն խրատեցէք: Առաջին տարիներէն իսկ անոնց մէջ տնկեցէք բարին եւ անկէ ետք չէք յոգնիր, որովհետեւ այս սովորութիւնը օրէնք կը դառնայ: Մի՛ ներէք երբ անոնք իրենց կամքին համաձայն կ'երթան, որովհետեւ ինչպէս իմաստութիւնը կ'ըսէ. «Մանկութիւնը եւ անմտութիւնը ունայնութիւն են» (Ժող. 11.10):

Զգո՛յշ եղէք, որ չարը ձեզմէ չյափշտակէ զայն: Սակայն դուք ատելի մտահոգ էք անոր հարստութեամբ քան պարկեշտութեամբ: Կ'ուզե՞ս զայն հարըստացնել՝ սորվեցո՛ւր անոր Աստուծոյ երկիւղը: Եթէ ինչքեր չունենայ իսկ, ոչինչով պակաս կը գտնուի ուրիշներէ: Թէեւ չարաբարոյ զաւակներու պարագային աղքատութիւնը բարիքի պատճառ կ'ըլլայ, մինչ հարստութիւնը բազմատեսակ չարիքներու կ'առաջնորդէ:

Մայրեր, խրատեցէք ձեր դուստրերը, որ պարկեշտութեամբ սիրեն, մաքուր ու երկիւղած ըլլան եւ ո՛չ թէ պճնասէր կամ ուրիշին ունեցածին ցանկացող: **ՅՈՐԴՈՐԱԿՆԵՐ**

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ԵՐԵՔՇԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ
ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ
ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Կազմակերպութեամբ Կրօնական ժողովին եւ Ազգային առաջնորդարանի «ԱՅՈ» երիտասարդական յանձնախումբին, ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ, սուրբ պատարագ պիտի մատուցուի:

Սուրբ պատարագը պիտի երգէ հաւատացեալ ժողովուրդը: Հոգեւոր խորհրդածուծիւն պիտի կատարէ Լիբանանի Հայոց առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս:

Նաեւ, ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-9:00, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան – Եռագոյն» սրահին մէջ, Արժ. Տ. Ղեւոնդ քհն. Լոշխաճեան Աստուածաշունչի սերտողութիւն պիտի կատարէ մեր ժողովուրդի զաւակներուն համար:

Միրելի ընթերցող, ճՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԷ.

ՃՐԱԳ ԸՄԲԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300 – facebook-ի էջ jerak Ծրագր թերթ



ՔՈՒ ԽՕՍԲԴ ԽՄ ՈՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԵԱԽԻՆՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119.105)

ԺԲ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 8 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2019

ԹԻՒ 49

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Ես. 37.14-38: Բ. Թս. 1.1-12
ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍ 14.12-24

**ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ
14.12-24**

Ապա Յիսուս տանտիրոջ ըսաւ. «Երբ ճաշի կամ ընթրիքի հրաւեր կու տաս, մի՛ կանչեր բարեկամներդ կամ եղբայրներդ, որպէսզի չըլլայ որ անոնք ալ քու հրաւերիդ փոխարէն քեզ հրաւիրեն եւ այս ձեռով քեզի հատուցում կատարած ըլլան: Ընդհակառակը, երբ ընդունելութիւն կը սարքես, կանչէ՛ աղքատներն ու խեղանդամները, կաղերն ու կոյրերը եւ այն ատեն երանելի պիտի ըլլաս, որովհետեւ անոնք քեզի փոխարէնը հատուցանելիք ոչինչ ունին: Եւ գիտցած եղիր, որ քու հատուցումդ պիտի ստանաս արդարներու յարութեան ժամանակ»:

Երբ սեղանակիցներէն մէկը այս խօսքերը լսեց, ըսաւ Յիսուսի. «Երանի՛ անոր, որ Աստուծոյ արքայութեան մէջ ճաշ պիտի ուտէ»:

Յիսուս անոնց հետեւեալ առակը պատմեց. «Մարդ մը կար, որ մեծ ընթրիք մը սարքեց եւ շատեր հրաւիրեց: Ընթրիքի ժամուն իր ծառան դրկեց, որպէսզի հրաւիրեալներուն ըսէ. «Եկէ՛ք, ամէն ինչ պատրաստ է»: Հրաւիրեալները սկսան մէկ առ մէկ հրաժարիլ: Առաջինը ըսաւ. «Ազարակ գնեցի. պէտք է երթամ եւ տեսնեմ զայն. հետեւաբար կը խնդրեմ՝ որ ներողամիտ գտնուի»: Միւսը ըսաւ. «Հինգ գոյգ եզ գնեցի. պէտք է երթամ փորձեմ զանոնք. հետեւաբար կը խնդրեմ, որ ներողամիտ գտնուի»: Ուրիշ մը ըսաւ. «Տակաւին նոր ամուսնացայ. հետեւաբար չեմ կրնար գալ»: Ծառան վերադարձաւ եւ իր տիրոջ պատմեց անոնց ըսածները: Այն ատեն տանտէրը վրդոված՝ ըսաւ ծառային. «Անմիջապէս քաղաք գնա՛ եւ հրապարակներուն ու փողոցներուն մէջ որքան որ աղքատ, խեղանդամ, կաղ եւ կոյր տեսնես, բոլորն ալ հոս բեր»: Քիչ ետք ծառան վերադառնալով իր տիրոջ ըսաւ. «Տէ՛ր, հրամանդ կատարեցի, բայց տակաւին տեղ կայ»: Տէրը ծառային հրամայեց. «Քաղաքէն դուրս գնա՛ եւ ճամբաներուն վրայ ու դաշտերուն մէջ որու որ գտնես, ստիպէ՛ որ գայ, որպէսզի տունս լեցուի: Կ'ըսեմ ձեզի, որ առաջին հրաւիրեալներէն ո՛չ մէկը ինձի հետ ընթրիքի պիտի նստի»:

**ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿՆԵՐ**

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ
37.14-38**

Եզեկիա պատգամաւորներուն ձեռքէն առաւ նամակը եւ կարդալէ ետք գնաց Տիրոջ տաճարը մտաւ եւ Տիրոջ առջեւ փոեց գայն: Ապա Եզեկիա Տիրոջ աղօթեց, ըսելով. «Ո՛վ Երկնաւոր Զօրփերու Տէր, Իսրայէլի Աստուածը, որ քերթելէնքէն վեր կը նստիս. դո՛ւն ես միակ Աստուածը աշխարհի բոլոր թագաւորութեանց, որովհետեւ երկինք ու երկիր դո՛ւն ստեղծեցիր: Ականջ տուր եւ լսէ՛, Տէ՛ր, նայէ եւ տե՛ս այն պատգամը, որ Սենեքերիմ թագաւորը դրկեց՝ նախատելու համար քեզ, որ կենդանի Աստուածն ես: Իրաւ է, որ Ասորեստանի թագաւորները ամբողջ աշխարհը աւերեցին եւ բոլոր ժողովուրդներու կոտորեցին, որովհետեւ անոնք աստուածներ չէին, այլ՝ մարդոց ձեռքով շինուած փայտ ու քար էին եւ ուստի փնացան: Բայց դուն, ո՛վ Տէր, մեր Աստուածը, ազատէ՛ մեզ անոր ձեռքէն, որպէսզի աշխարհի բոլոր թագաւորութիւնները ցանցնան թէ միայն դո՛ւն ես Աստուածը»:

Այն ատեն Աստուած Ամոսի որդի Եսային դրկեց Եզեկիայի մօտ, եւ անիկա գալով, ըսաւ. «Այսպէս կ'ըսէ Տէրը, Իսրայէլի Աստուածը. Լսեցի, ինչ որ աղօթեցի ինձմէ Ասորեստանի Սենեքերիմ թագաւորին համար: Ահա, Աստուած այսպէս կ'ըսէ անոր. «Սիրոն քաղաքը, որ չկրցար գրաւել, պիտի անարգէ եւ արհամարհէ քեզ, Երուսաղէմի բնակչութիւնը պիտի հեզնէ ու ծաղրէ քեզ»:



**ԹԵՍԱԼՂՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ
1.1-12**

Մենք՝ Պօղոս, Սիդուանոս եւ Տիմոթէոս, կը գրենք ձեզի՝ թեսաղոնիկեցիներու եկեղեցիին, որ մեր Հօր Աստուծոյ եւ Տէր Յիսուս Քրիստոսի կը պատկանի: Թող Աստուած մեր Հայրը եւ Տէր Յիսուս Քրիստոս շնորհիք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի:

Եղբայրներ, պարտք կը զգանք եւ արդար կը գտնենք ձեզի համար միշտ գոհութիւն յայտնել Աստուծոյ, որովհետեւ ձեր հաւատքը հետզհետէ աւելի կ'անի եւ ձեզմէ իւրաքանչիւրին սերը իրարու հանդէպ աւելի կը խորանայ: Աստուծոյ եկեղեցիներուն մէջ մենք կը պարծենանք ձեզմով, այն համբերութեան եւ հաւատքին համար, որ դուք ցուցաբերեցիք ձեր կրած բոլոր հալածանքներուն եւ նեղութիւններուն մէջ: Զեր այդ համբերութիւնը եւ հաւատքը ապացոյց պիտի ըլլան Աստուծոյ արդար դատաստանին, որովհետեւ դուք արժանի պիտի ըլլաք Աստուծոյ արքայութեան, որուն համար այդքան կը տանջուիք: Արդարեւ, Աստուծոյ համար արդարութիւն պիտի ըլլայ ձեզ չարչարողները տանջանքով պատժել, իսկ ձեզի՝ տանջուածներուդ, հանգիստ պարգեւել մեզի հետ միասին, երբ մեր Տէրը Յիսուս հրեշտակներու իր բանակով երկինքէն յայտնուի:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

**ՆԻԿՈՂԱՅՈՍ
ԱՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ
ՅԱՅՐԱՊԵՏ**



Նիւոայ Արքեպիսկոպոս՝ որ Լիկիոյ քաղաքէն էր, Զմիւռնիոյ մօտ: Որդին էր Եպիփան եւ Նունէ անուն բարեպաշտ ծնողաց: Իր հրաշագործութիւններով ուշադրութիւն գրաւեց մանուկ հասակէն: Եպիսկոպոս ձեռնադրուած է իրեն համանուն եպիսկոպոսէն՝ որ իր բեռին էր: Մասնակցած կը համարուի Նիկիոյ ժողովին: Մանուկներու մասին տարած հոգածու սիրոյն համար, նկատուած է մանուկներու պաշտպան. «Սանթագիօզա» կոչումը ունեւորէն եւ մանկաբար խնդածեւուած կերպն է իր անունին: Ան ծանօթ է իբրեւ ազատարար նաւակոծելոց եւ կոչուած է Սփանչելագործ: Բարի մահով վախճանած է Դ. դարուն: Քանի մը դար ետք, իր նշխարները փոխադրուած են Իտալիոյ Պատի քաղաքը, ուր իր անուան նուիրուած մեծ տաճար մը կայ:

**Կիրակի օրը եկեղեցի երթա՞մ,
թէ՞ տունս՝ իմ սենեակս
աղօթեմ: Այդ մէկը բաւարար
է ինձի համար:**

Վարդան Վարդապետ Այգեկցի կ'ըսէ. Քրիստոս աղօթողին այսպէս հրահանգեց. «Քու սենեակդ մտի՛ր եւ փակէ՛ քու դռներդ, եւ գաղտուկ աղօթք ըրէ՛ քու Հօրդ» (Մատթէոս 6.6): Այստեղ մարմինը եւ սիրտը սենեակ կը կոչէ եւ կը պատուիրէ մարմնական ամէն խորհուրդ՝ աղօթքի ժամանակ մտէն հեռացնել:

Քրիստոնեայ ժողովուրդէն մէկը, երբ լսէ եկեղեցւոյ գանգին ձայնը՝ գիշեր թէ ցերեկ ատեն, մանաւանդ Կիրակի օրը, որ տէրունական օր է, եւ եկեղեցւոյ՝ երկինքի արքայութեան դուռը չ'երթար, քահանան չի տեսներ, ու չի լսեր Աստուծոյ պատուիրաններուն հրամանը, պիտի չտեսնէ փառաց Տէրը բազմած քառակերպ կենդանիներուն վրայ: Ուստի ան, որ Կիրակի օրը չի տեսներ եկեղեցականը եւ չի խոստովանիր իր յանցանքները, Աստուծոյ փրկութիւնը պիտի չտեսնայ:

Վարդան Վրդ. Այգեկցի

ԱՌԱԿ

Խրատ առէք եւ ոչ թէ արծաթ, գիտութիւն՝ քան թէ ընտիր ոսկի: Իմաստութիւնը աւելի կ'արժէ քան գոհարեղէնները եւ ոչ մէկ թանկարժէք բան կրնայ հաւասարիլ անոր:

Ես՝ իմաստութիւնս, բնակեցայ խոհեմութեան մէջ եւ իւրացուցի մտածողութիւնն ու գիտութիւնը:

Աստուածավախ մարդը կ'ատէ անիրաւութիւնը, թշնամութիւնը, հպարտութիւնն ու չարագործութիւնը: